Անկախության հռչակագրի ներածական

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ, 1776 թվականի հուլիսի 4.



IN CONGRESS, JULY 4, 1776.

A DECLARATION

BY THE REPRESENTATIVES OF THE

UNITED STATES OF AMERICA,

IN GENERAL CONGRESS ASSEMBLED.

WHEN in the Course of human Events, it becomes neceſſary for one People to diſſolve the Political Bands which have connected them with another, and to aſſume among the Powers of the Earth, the ſeparate and equal Station to which the Laws of Nature and of Nature's God entitle them, a decent Reſpect to the Opinions of Mankind requires that they ſhould declare the cauſes which impel them to the Separation.

Վերևում Անկախության հռչակագրի հազվագյուտ առաջին տպագրությունն է: Բուն ձեռագիր փաստաթուղթը մշտական ցուցադրության է դրված Վաշինգտոնի Ազգային արխիվում : ©AP Images

Ամերիկայի Միացյալ Տասներեք Նահանգների միաձայն Հռչակագիրը

Երբ մարդկային իրադարձությունների ընթացքում անհրաժեշտ է դառնում, որ մեկ ժողովուրդ լուծարի՝ մեկ այլ ժողովրդի հետ իրեն միացնող քաղաքական կապերը և աշխարհի այլ ինքնիշխան տերությունների շարքում՝ Բնության և Աստծո Օրենքներով վերագրված, անջատ ու հավասար կարգավիճակ ստանձնի, մարդկության կարծիքների նկատմամբ արժանավայել հարգանքը պահանջում է, որ հայտարարվեն այն պատճառները, որոնք դրդում են նրանց դեպի տարանջատումը:

Մենք սույն ճշմարտություններն ընդունում ենք որպես անվիճարկելի փաստ, այն է. որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, որ նրանք իրենց Արարչի կողմից օժտված են որոշակի անօտարելի իրավունքներով, այդ թվում՝ Կյանքի, Ազատության և Երջանկության հետամուտ լինելու: — Որ այդ իրավունքներն ապահովելու համար, մարդկանց միջև կառավարություններ են հաստատվել՝ արդարացված լիազորություններ ստանալով կառավարվողների համաձայնությունից: — Որ բոլոր այն դեպքերում, երբ կառավարության ցանկացած ձև այս նպատակներին հասնելու գործում դառնում է կործանարար, ապա Ժողովրդի իրավունքն է այն փոփոխել կամ վերացնել, և հիմադրել նոր կառավարություն՝ հիմքերում ունենալով այնպիսի սկզբունքներ և լիազորություններն այնպես կազմակերպելով, որն իրենց կարծիքով առավելապես ապահովելու է իրենց անվտանգությունն ու երջանկությունը:

Թոմաս Ջեֆերսոնը շարադրեց Անկախության հռչակագրի առաջին նախագիծը: ©AP Images